Ամփոփ նյութ

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոցներ՝ ապահովագրական գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՈՐՈՇՈՒՄ
20.01.2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1/03 ԲԳ-Ա

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սույն որոշման նկարագրական մասի 1-ին կետով նկարագրված խախտումը թույլ տալու համար Ընկերության նկատմամբ կիրառել ***տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով:***

2. Սույն որոշման նկարագրական մասի 2-րդ կետով նկարագրված խախտումը թույլ տալու համար Ընկերության նկատմամբ կիրառել ***նախազգուշացում՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու, ինչպես նաև հետևյալ միջոցառումներն իրականացնելու հանձնարարականներով.***

- ապահովել Բանկի որպես ապահովագրական գործակալ հանդես գալու դեպքում հաճախորդին պատշաճ ստորագրված ապահովագրական վկայագրի տրամադրումը,

- այն դեպքում, երբ Բանկը հանդես է գալիս որպես ապահովադիր, ապա օրենսդրությամբ սահմանված կարգով, մինչև ապահովագրված անձի կամ շահառուի համար ապահովագրության պայմանագրի գործողության մեջ մտնելը վերջիններիս տրամադրել Ապահովագրողի կողմից հաստատված և օրենսդրությամբ սահմանված պահանջները պարունակող՝ ապահովագրության էական պայմանները պարունակող վկայագիր:

3. Սույն որոշման նկարագրական մասի 3-րդ կետով նկարագրված խախտումը թույլ տալու համար Ընկերության նկատմամբ կիրառել ***տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով և նախազգուշացում՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու, ինչպես նաև*** նկարագրված ապահովագրական պրոդուկտների պայմաններն ու սակագները վերանայելու (*այդ թվում՝ միևնույն ապահովագրական պրոդուկտի համար միևնույն սակագնի կիրառման և նույն պայմանագրով միաժամանակ ապահովագրական գործակալ և ապահովադիր հանդես գալու տեսանկյունից*) և 5-օրյա ժամկետում ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնելու հանձնարարականով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերություն մուտքագրվելու կամ Ընկերության՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ